

2020

ՀԱՆԳՍՏԻ ՏՆԱԿՆԵՐ

ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2
հասցե

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԼԵԳԱԼ» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ




ՀԱՆԳՍՏԻ ՏՆԱԿՆԵՐ

ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցե

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«ԼԵԳԱԼ» ՍՊԸ տնօրեն՝



Ա. Կարապետյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.3	Հապավումներ	5
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	8
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	8
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	8
1.5.3	<i>Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....</i>	10
1.5.3.1	<i>Շինարարության կազմակերպչատեխնոլոգիական սխեման</i>	10
1.5.3.2	<i>Շինարարության ժամկետները.....</i>	11
1.5.3.3	<i>Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....</i>	11
1.5.3.4	<i>Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....</i>	12
1.5.3.5	<i>Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը</i>	14
1.5.3.6	<i>Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության պահանջներ</i>	14
1.5.4	<i>Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ.....</i>	17
1.5.5	<i>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց</i>	20
1.5.6	<i>Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ.....</i>	21
1.5.7	<i>Էլ. մատակարարում.....</i>	21
1.5.8	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում.....</i>	21
1.5.9	<i>Գազամատակարարում.....</i>	22
1.5.10	<i>Կանաչապատման աշխատանքներ.....</i>	22
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	28
2.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը	28
2.2	Տեղամասի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը	32
2.3	Կենսաբազմազանությունը.....	33
2.3.1	Բուսական աշխարհ	34
2.3.2	Կենդանական աշխարհ	35
2.3.3	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները.....	36
2.3.4	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ	38
2.4	Օդային ավազան.....	38

2.4.1	Ֆոնային ադոտովածություն	38
2.5	Ջրային ռեսուրսներ	39
2.1	Թափոնների կառավարում	39
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	45
3.1	Ռիսկերի գնահատում	45
3.2	Արտանետումների աղբյուրները	45
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	45
3.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	45
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	46
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	46
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	47
3.3.5	<i>Աղմուկ և թրթռում</i>	47
3.3.6	<i>Թափոնների կառավարում</i>	48
3.3.7	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	49
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	49
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	50
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	53
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ «ԼԵԳԱԼ» ՍՊԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Գրիբոյեդով 5ա բն. 17

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր
Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցե

1.6 Հեռախոս՝ +374 93 007788

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից հանգստի տնակներ: Հանգստի տնակների կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում:

Հանգստի տնակների կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հանգստի տնակների կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),

- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ., ՀՀ կառավարության 29.01.2010թ.
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշում:
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության <<ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության <<ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- <<ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև`
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում

- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում: Հողամասի հիմնական մակերեսը, համաձայն սեփականության վկայականի՝ կադաստրային ծածկագիր 07-005-0023-0292, կազմում է 2.511898 հա:

Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն
Տարածքը ունի թեք ռելեֆ, ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ծառաթփային բուսականությունը բացակայում է:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Կոտայքի մարզ, Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում նախագծված հանգստի տնակների աշխատանքային նախագծի համար հիմք է հանդիսացել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից 05.06.2020թ. տրված N14 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախագիծը բաղկացած են 4 տիպի քոթեջներից, որոնցից 1-ին, 2-րդ, 3-րդ տիպի քոթեջները երկու հարկանի են, իսկ 4-րդ տիպի քոթեջը՝ եռահարկ մանսարդով: Քոթեջները դասավորված են մի գծով, փողոցի երկայնքով: Նախատեսվում է ութ զուգահեռ շարքով դասավորված քոթեջներ (ընդամենը 51 քոթեջ), որոնց դիմային և հետևային հատվածովանցում են քոթեջները իրար կապող փողոցները: Քոթեջները իրար կապող յուրաքանչյուր հաջորդ փողոց նիշով բարձր է իրեն նախորդող փողոցից: Այսինքն ստացվում է հողատարածք մտնող մուտքից սկսած հողատարածքի նիշը աստիճանաբար բարձրանում է (մոտավորապես 1825.69-ից սկսած մինչև 1875.82)

1-ին, 2-րդ, 3-րդ տիպի բոլոր քոթեջներում նախատեսված են տան մուտքային մասում տախտակամածե երեսապատմամբ հարթակներ, դեպի տան ետևային մաս տանող աստիճաններ, ավտոկայանատեղի, որը կազմակերպված է տան ետևամասից (ելնելով փողոցի նիշերի տարբերությունից, տան դիմային(մուտքային) մասը նիշով ավելի ցածր է, քան ետևամասը) և կանաչապատ հատվածներ:

4-րդ տիպի քոթեջում նախատեսված է երկու մուտք՝ շենքի դիմային և ետանյին մասից (ելնելով հողատարածքում նիշերի տարբերությունից), ավտոկայանատեղի, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ և զրուցարաններ:

1-ին տիպի քոթեջը 5800x7800 մմ արտաքին չափերով երկհարկանի շինություն է: Առաջին հարկում նախատեսված է 27.7քմ մակերեսով հյուրասենյակ հատեղված խոհանոցի հետ, 3.2քմ մակերեսով սանհանգույց, երկրորդ հարկում երկու ննջասենյակ՝ համապատասխանաբար 11.6քմ և 13.7 քմ մակերեսներով և 3.9քմ մակերեսով սանհանգույց:

2-րդ տիպի քոթեջը 8300x5900 մմ արտաքին չափերով երկհարկանի շինություն է: Առաջին հարկում նախատեսված է 10քմ մակերեսով խոհանոց, 20.3քմ մակերեսով հյուրասենյակ, 2.9ք, մակերեսով սանհանգույց և 2.3քմ մակերեսով խորդանոց: Երկրորդ հարկում նախատեսված է երկու ննջասենյակ՝ համապատասխանաբար 14.3քմ և 13.6ամ մակերեսներով, 4.8քմ մակերեսով սանհանգույց:

3-րդ տիպի քոթեջը 9.300 x6200 մմ արտաքին չափերով երկհարկանի շինություն է : Առաջին հարկում նախատեսվում է 10.6քմ մակերեսով խոհանոց, 28.3քմ մակերեսով հյուրասենյակ, 3.7քմ մակերեսով սանհանգույց և 2.2քմ մակերեսով խորդանոց: Երկրորդ հարկում նախատեսվում է երեք ննջասենյակ՝ համապատասխանաբար 10.5քմ, 10.1քմ և 11.4քմ մակերեսներով, 2.7քմ մակերեսով խորդանոց և 3.8քմ մակերեսով սանհանգույց:

4-րդ քոթեջը 16.000 x7.000 մմ արտաքին չափերով շինություն է, որը մի կողմից եռահարկ է մանսարդով, մյուս կողմից երկհարկ մանսարդով(ելնելով հողատարածքում նիշերի տարբերությունից): Քոթեջի յուրաքանչյուր հարկը բաղկացած է երկուական բնակարանից, որոնք նախագծված են միևնույն սկզբունքով: Բնակարաններից յուրաքանչյուրը բաղկացած է խոհանոցի հետ համատեղված հյուրասենյակից, ննջասենյակից և սանհանգույցից:

Քոթեջների տանիքները երկթեք են, ջրահեռացումը՝ կազմակերպված:

Քոթեջների ցուկոլային հատվածը նախատեսված է երեսապատել մոխրագույն երանգի սրբատաշ բազալտով:

Քոթեջները արտաքինից երեսապատված են բարձրորակ դեկորատիվ սվաղով համադրված փայտե դեկորատիվ դետալներով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Հողամասի ընդհանուր մակերես՝ 25118.9քմ

1. Կառուցապատում՝ 12 % 3094.7քմ

2. Բարեկարգում՝ 46%

- Փողոցներ/Մայրեր՝ 8274.5քմ

- Ավտոկայանատեղի (բետոնե մակերևույթ խոտածածկ հատվածներով՝ 2136.8քմ
 - Արտաքին աստիճանների, հարթակներ՝ 1059.4քմ
3. Կանաչապատում՝ 42%

- Խոտածածկ մակերեվույթ՝ 9041.5քմ
- Կանաչապատ խաղահրապարակներ^a 1512.0քմ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.5.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

1.5.3.1 Շինարարության կազմակերպչատեխնոլոգիական սխեման

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմներ ընդհանուրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է JCB 4CX էքսկավատորը, որն օժտված է գրունտի փխրեցման սեպային կախովի սարքավորմամբ :

JCB 4CX էքսկավատորի տեխնիկական բնութագիրը

Զախեղը /երկարություն ,լայնություն ,բարձրություն / Շարժիչի հզորություն ու լ ու լը	5.91 * 2.24 * 3.48 մ 100 ձ . ու . ժ . (74 կՎտ)
Դիմացի շերտի ծավալը	1.1 մ ³
Ետին շերտի ծավալը	0.33 մ ³
Ջանգվածը	7950 կգ
Փորման խորությունը	4.32մ
Փյուննող հիդրոմուր ճի առկայությունը	առկա

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է СБ-69Б ավտոբետոնախառնիչով՝ վերամբարձի, ավտոբետոնապոմպի կամ ստացիոնար բետոնապոմպի միջոցով: Բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1,5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Ձմեռային պայմաններում երկաթբետոնե աշխատանքներն իրականացնելու ժամանակ առաջարկվում է կոնտակտային եղանակով (տաքացնող լարի միջոցով) բետոնի ջերմամշակումը :

Առաջարկվում է ПНСВ -1,2 մակնիշի 1,2 մ տրամագծով պոլիվինիլքլորիդային մեկուսացումով ցինկապատ պողպատե ջղով լարի կիրառումը :

Էլեկտրասնուցումն իրականացվում է ТСДЗ-63/0,38, ТСДЗ-80, СПБ-80, КТП ТО-80/86 կամ КТП -63/0Б տիպի իջեցնող տրանսֆորմատորներով, որոնք օժտված են լարման իջեցման մի քանի աստիճաններով, ինչը թույլ է տալիս արտաքին օդի ջերմաստիճանի փոփոխման դեպքում կարգավորել ջերմային հզարությունը : Տաքացնող լարերով կարելի է ջերմամշակել միաձույլ կոնստրուկցիաները մինչև -30°C պայմաններում : 1մ³ բետոնի տաքացման համար միջինում անհրաժեշտ է 60 մ ПНСВ -1,2 մակնիշի լար :

1.5.3.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը նախապես որոշվել է ըստ ՄՆԻՊ 1.04.03-85*-ի՝ հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը և շինարարական ծավալը:

1.5.3.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները :

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում, իսկ գործիքների, հարմարանքների, հանդերձանքի անվանացանկն աղյուսակ 2-ում :

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Մոբիլային վերամբարձ կռունկ /ճշտել ըստ տեղանքի /	KC 8973	1
2	Աշտարակային կռունկ		1
3	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	JCB 4CX	3
4	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	2
5	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	1
6	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	1
7	Փոխարկիչ թրթրիչների համար	ИВ-4	1
8	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
9	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	1
10	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		2
11	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
12	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
13	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

1.5.3.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 3-ում :

Աղյուսակ 3

Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ .	Ծավալը
1	Ժամանակավոր ցանկապատում	գմ	140,0
2	Փոսորակի մշակում	մ ³	5745,0
3	Ե/բ հիմքեր	մ ³	247,0
4	Ե/բ սյուներ	մ ³	423,0
5	Ե/բ հատակ	մ ³	77,0
6	Ե/բ հեծաններ	մ ³	1294,0
7	Ե/բ ծածկ	մ ³	670,0
8	Ամրանավորում	տ	500,0

Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների , կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

Էներգառեսուրսների և ջրի պահանջարկ

1. Էլեկտրաէներգիա Քհաշվ , ԿՎտ 112.0
2. Ջուր մ³/օր 3.95

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10 լ/վրկ :

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

ՀԱՇՎԱՐԿ

անհրաժեշտ էլեկտրական հզորության ,կՎտ

1. Վերամբարձ կռունկ 55
2. Տոփանիչ CR 3/60 / 2 հատ 10
3. Եռակցման սարքեր /2 հատ 10
4. Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ 24 /հատիչներ, դուրեր, սղոցներ և այլն / 2 կոմպլեկտ
5. Էլեկտրաթրթրիչներ 22
6. Շինհրապարակի լուսավորում և կենցաղ 10
7. Շենքի լուսավորում 10

P տեղ.=141 կՎտ

P հաշվ . = Pտեղ.* Kպահանջ . =141ԿՎտ * 0,8=112.0 ԿՎտ

Ջրօգտագտագործման հաշվեկշիռ

NN	Անվանումներ	Տեխնոլոգիական գործընթաց	Միավորների քանակը	Ջրօգտագործման նորմս			Ընդհանուր ջրածախս	Զրամատակարարման աղբյուրները, մ3/օր			
				Հիմնավորում	Միավորի ծախսը մ3/օր	Զրի անհրաժեշտ քանակը		բաղ. ջրացանց	արտեզ	տեխ. ջրատար	շրջանուղ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Տնտեսական/կենցաղային կարիքներ											
1	Կենցաղային	ԻՏԱ	4	СНИП2/04.85*	0.016	խմելու.	0.064	0.064			
2	Կենցաղային	բանվ.	42	СНИП2/04.85*	0.025	խմելու.	1.05	1.05			
3	Ղողերի լվացում	Ղողերի լվացում	6	ПКТП Промстрой	0.14		0.84				0.84
4	Բետոնի պատրաստում	Բետոն, մ3	2	ЕНИР Н-2-12п.1	0.72		1.44	1.44			
5	Բետոնի խնամք	ջրում, մ3	15	С401п.163	0.0314		0.47	0.47			
6	Շինհրապարակի մաքրում	ջրում, մ2	20	ГОСТ 12.3.00 2-75	0.004		0.08	0.08			
Ընդամենը`							3.95	3.11			0.84

Հանգստի տնակների շինարարական աշխատանքների ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնելու Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից ստավցված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում) համաձայն:

1.5.3.5 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր :

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

- ա/ կոնստրուկցիաների , շինվածքների , նյութերի և սարքավորումների ,
- աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը ;
- բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը ;
- գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը :

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի

տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա :

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը ; շինարարական կոնստրուկցիաների , շինվածքների , իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին , անձնագրերի , սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը :

1.5.3.6 Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության պահանջներ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարձքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ


1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան


2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^ա անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.5.4 Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ





ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


<<Լեզալ>> ՍՊԸ

ին Հողատկացման հիմքը

Անուն, ազգանուն
Կոտայի
Մարզ

Ծաղկաձոր
Համայնք

Հասցե



ՀՈՂԱՄԱՍԻ		Մ		Ս		Ս		Ս		Ս		
Սակերեսը (հա)	2.511898	X	Y	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Համարը, բյուր հորանալի հատվածով	Գործառական նշանակությունը (անվանումը)						
Ծածկագիրը		1	4489341 59	8476097 48	7 31	1	գյուղատնտեսական					
Նպատակային նշանակությունը	հատուկ պահպանվող տարածքների	2	4489344 94	8476090 98	0 42	2	գյուղատնտեսական					
Գործառական նշանակությունը	հանրային համար նախատեսված	3	4489345 33	8476091 17	0 46	3	գյուղատնտեսական					
Հողամասը ծանրաբերելի է		4	4489345 49	8476090 73	3 81	4	գյուղատնտեսական					
		5	4489348 52	8476088 43	33 07	5	գյուղատնտեսական					
		6	4489376 29	8476070 47	18 37	6	գյուղատնտեսական					
		7	4489368 79	8476057 01	37 05	7	գյուղատնտեսական					
		8	4489417 66	8476033 79	25 58	8	գյուղատնտեսական					
		9	4489436 81	8476016 83	8 39	9	գյուղատնտեսական					
		10	4489443 09	8476011 26	2 61	10	գյուղատնտեսական					

Կատարող Արարատ Սողոմոնյան 28.04.2020թ.
(ստորագրություն)
Որակավորման վկայականի համար 0219 (Անուն, ազգանուն) տրման ամիս, ամսաթիվը 02.08.2012թ.
Իրավաբանական անձի անվանումը «ՀՀ Արարատ Սողոմոնյան Ստորագրություն» ԿՏ

1.5.5 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

N.	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																						
		30 օր	60 օր	60 օր	60 օր	60 օր	60 օր	90 օր	90 օր	90 օր	90 օր	90 օր	90 օր	90 օր	60 օր	60 օր	60 օր	60 օր	60 օր	60 օր	60 օր	30 օր	30 օր	
1.	ՇՆ. ՀՐԱՊԱՐԱԿԻ ԵՎ ԱՆՎԱՆԳ. ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՑՄԱԿԵՐՊՈՒՄ	█																						
2.	ՀՈՒՅՅԻՆ ԱՇՁԱՏԱՆՔՆԵՐ		█	█	█																			
3.	ՀԵՄԱՊԱՏԵՐ			█	█	█	█																	
4.	ՔՈՅԵՑ ՏԻՊ 1				█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
5.	ՔՈՅԵՑ ՏԻՊ 2						█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
6.	ՔՈՅԵՑ ՏԻՊ 3										█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
7.	4 ՀԱՐԿԱՆԻ ՔՈՅԵՑ													█	█	█	█	█	█	█	█	█	█	█
8.	ԱՐՏԱՔԻՆ ԻՆՏԵՆՏԵՐԱԿԱՆ ԳՑԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ		█	█	█																			
9.	ՇՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՌԻ ՀԵՈՒՑՈՒՄ ԵՎ ԲԱՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ				█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
10.	ՑԱՐԱՑՔԻ ԿԱՆՇՏՐԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ																					█	█	█
11.	ՍԿԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱՁԵՐԵՐԻ ԵՎ ՇԱՂԳՈՐԾՄԱՆ ԱԿՑ																							█

ՇՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1080 ՕՐ

1.5.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում: Հողամասի հիմնական մակերեսը, համաձայն սեփականության վկայականի՝ կադաստրային ծածկագիր 07-005-0023-0292, կազմում է 2.511898 հա:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 27 մարդ, որից

- Բանվորներ -25 մարդ
- Ինժեներներ -2 մարդ

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 17921մ³

Հետլիցք՝ 15378մ³

Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

1.5.7 Էլ. մատակարարում

Հանգստի տնակների էլեկտրամատակարարման համար ընկերությունը կդիմի <<ՀԵՑ>> ՓԲԸ-ին: Տեխնիկական պայմաններ ստանալուց հետո, էլ. մատակարարման իրականացման համար, կառուցապատողը պետք է դիմի «ՀԵՑ» ՓԲԸ տարածքային համակարգման տնօրինություն՝ համաձայն ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջների՝ էլ. Ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:

1.5.8 Ջրամատակարարում և ջրահեռացում

Հանգստի տնակների ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնելու համար կառուցապատողը Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից ստացել է համապատասխան տեխնիկական պայման (կցված հավելվածների բաժնում):

1.5.9 *Գազամատակարարում*

Հանգստի տնակների գազամատակարարումը իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Բազմաֆունքիոնալ համալիրի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում, ջերմամատակարարումը իրականացվելու է հոսանքով:

1.5.10 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատման մակերես 40% և ավելի է ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Էլեմենտներնի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով համալիրի նախագծի առանձնահատկությունները և տարածաշրջանի բուսականությունը:

Նախատեսվում է կաթիլային ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով:

Կանաչապատման սխեմա



ՆԱԽԱԳԾՈՂ	Ո. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ		Նախագծի անվանումը ՀԱՆՐԱՑԻ ԳՆԵՐ ԿՈՏԱԵՒՍԱՐՑ, Զ. ԾԱՊԿԱՆՈՐ, ԱՐԱՄԱՆԻ 14-Ն ՔՈՒՐՆ 12	Գծագրի անվանումը ԿԱՆԱԿԱՍՄԱՆ ԵՆԿԵՏՑՈՒՆ ՀԱՏԱԿԱԳԻՑ	Փուլ Մաս Մասշտաբ Թիվ 3	ՆԱԽԱԳԻՑ ԲՈՒՆՈՒՄԻ ԿՐԻՍՏՈՍԱՆՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆՈՒ 1:1000 Թիվ 3	 «ԱՐՈՆԻՑ ԱՐՑ» ՍՊԸ
----------	----------------	--	---	--	---------------------------------	--	-------------------------



- 1 Թեփ-կախար-112հաս
- 2 Ձևաձևի մակնիշ-164հաս
- 3 Ձևաձևի իլեկ-295հաս
- 4 Ձևաձևի սաստի-55հաս
- 5 Կանաչիկ - 74հաս
- 6 Գոյաքաղցր-16 հաս
- 7 Ստիպան-6 թող-540 հաս
- 8 Թուրք գոբի-74 հաս
- 9 Երանանկ-12հաս
- 10 Բարբադոս - 150 հաս
- Սնաճիճ-440գ
- Սիճակ-10253.50մ²

ՆԱԽԱԳԾՈՂ	Ո. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ		Նախագծի անվանումը ՎՈՐԱՑԻ ՏՆԵՐ ԿՈՏԱՅԷ-ՍՈՐԳ, Զ. ԵՐԿՐԱՆՈՐ, ՍԱՐԱՆՔԻ 1+1-Ի ԹՈՒՆ 1/2	Գծագրի անվանումը ԿԱՆԱԾԱԿԱՏՄԱՆ, ՍՈՐԿԱԿԱՏՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳԱՏՄԱՆ ՁԱՆԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՇ	Փուլ Մաս	ԿԱՆԱԾԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՐ, ՍՈՐԿԱԿԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԾԱԿԱՏՄԱՆ	 «ԱՆԱՏՈՑ ԱՐՏ» ՍՊԸ
					Մասշտաբ Թիվ	1:1000 4	

		<p>1 ՅՆԱԿ ԿՈՒՆԻՐ-112հատ</p>
		<p>5 ԿՍԵՍԼՊԱ - 74հատ</p>
		<p>9 ԶԻՍԱԿԱԿ-12հատ</p>
		<p>2 ԳՆԱԶԵԿ ԱԿՍԻ-Ա-184հատ</p>
		<p>6 ԳՈՐԿՆԵՍԾԱՆ-18 հատ</p>
		<p>10 ԲԱՐՔԱՐԱ - 150 հատ</p>
		<p>3 ԳՆԱԶԵԿ ԻԼԵՆԻ-295հատ</p>
		<p>7 ԱՅՈՒՆԵԿ ԹՈՒՅԱ-340 հատ</p>
<p>1 մ²-ում ՆԱԽԱՏԵՍԱՎՈՐՄ է 0.033կգ ԽՈՏԻ ՍԵՐՄ</p> <p>ԸՆԴԱՄԵՆԸ-348 կգ ԽՈՏԻ ՍԵՐՄ</p>		<p>ԱՐՁԱՍԱՐԳ-10993.5մ²</p>
		<p>4 ԳՆԱԶԵԿ ԱՍԱՇԻՑ-55հատ</p>
		<p>8 ԺՈՎԱՂ ԳԻԳԻ-74 հատ</p>
<p>1 կմ-ում ՆԱԽԱՏԵՍԱՎՈՐՄ է ՏԵՂԱԴՐԵԼ 4 ԹՈՒՓ</p> <p>ԸՆԴԱՄԵՆԸ-1760 ԹՈՒՓ</p>		<p>ԱՍԱՇԻՑ-440զմ</p>
<p>ՆԱԽԱԳՈՂ</p>	<p>Ո. ՀԱՅՐԱԳԵՅԱՆ</p>	<p>Նախագծի անվանումը ընդունելու Կոնստ-ՍԱՐԶ, Ճ. ԺԱՂԱՅՈՂ, ԱՐՁԱՍԱՐԳ Ի-Կ ԹՈՒՓ 10</p>
<p>ԳՁագրի անվանումը ԺԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏՆԿԱՍԱՆ ՍՄԵՍԱ</p>	<p>Ծով. ՆԱԽԱՅԻՑ ՄԱՍ ԶԱՐԿՈՒՄԱՆ ԱՐԽԱՍԱՆՈՒՄ ԵԿՈՆՈՄԱՆՈՒՄ Մազաթա Թիք 6</p>	<p>«ԱՌՈՏՈ ԱՌՏ» ՍՊԸ</p>

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում: Հողամասի հիմնական մակերեսը, համաձայն սեփականության վկայականի՝ կադաստրային ծածկագիր 07-005-0023-0292, կազմում է 2.511898 հա:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում ծառահատումներ չեն իրականացվում:

Հարևանությամբ գտնվում ճանապարհներ, բնակելի և հասարակական շենք շինություններ:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Համաձայն տեղամասի երկրաբանական ուսումնասիրության առաջին շերտը՝ լիցք կազմված խճի, խճավազի և ավազակավերի խառնուրդից: Գրունտը խոնավ է: Շերտի հորատված հզորությունը 2,0 մետր է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի միջնամասից դեպի հարավ-արևելք տարածվող Ծաղկունյաց լեռների Թեղենիս լեռան արևելյան լանջին՝ հարավից հյուսիս 120 անկումով, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1806-1788 մետրերի սահմաններում:

Ծաղկաձոր քաղաքը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ճյուղավորման Թեղենիս լեռան (2846մ) արևելյան լանջին և ընդգրկում է Տանձաղբյուր գետի ավազանը (ծովի մակերևույթից 1830-2000մ բարձրության վրա): Ռելիեֆը բարդ է, հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 1.2 կմ/կմ²: Հովտաձորակային ցանցի խտությունը 3.0 հատ/ կմ² է: Մակերևույթի թեքության անկյունը կազմում է 4-120:

Երևանի հետ կապված է 51 կմ բարեկարգ ասֆալտապատ մայրուղով: Մայրաքաղաքի հետ հաղորդակցությունն ավտոմոբիլային է, մասնակիորեն՝ երկթուղային: Ծաղկաձոր քաղաքի ընդհանուր տարածքը կազմում է 1618,29 հա, բնակչությունը՝ 1503 մարդ: Ռեսուրսների հիմնական տեսակներն են ռելիեֆից և պատմամշակութային ռեսուրսները, անտառային ֆոնդի հողերը:

Համայնքում գերիշխող են հանգստի կազմակերպման, սպորտի, տուրիզմի, առողջարարական և սպասարկաման ծառայությունները: Շնորհիվ կազդուրիչ անտառների և բուժիչ կլիմայի, գեղատեսիլ բնապատկերների և լեռնագրական պայմանների առանձնահատկությունների, Ծաղկաձորը համարվում է հանրապետության ամբողջ տարի գործող կարևորագույն հանգստավայրերից մեկը և, ՀՀ

կառավարության 2006 թվականի փետրվարի 1-ի N95-Ա որոշմամբ այն հայտարարված է որպես Զբոսաշրջային կենտրոն:

Ծաղկաձորը գտնվում է բարձրադիր լեռնային գոտում, այդ իսկ պատճառով ջերմաստիճանը ամռանը այստեղ չի գերազանցում +26 աստիճանը, իսկ ձմռանը +5: Ձմռանը կլիման նույնպես մեղմ է: Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում՝ տարածքի կլիման բնութագրվում է որպես բարձրլեռնային հատուկ՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ ամառով և չափավոր ցուրտ, անհողմ, ձյունառատ ձմեռով: Տեղումների տարեկան քանակը 789մմ է, որից 506 մմ՝ տարվա տաք սեզոնում (ապրիլ-հոկտեմբեր):

Օդը մշտապես չոր է, այդ պատճառով ցրտերը այնպես էլ ուժեղ չեն զգացվում: Ձմռանը սովորական ջերմաստիճանը լինում է օրվա ընթացքում +5, գիշերը մինչև -20: Եղանակը փոխվում է անկանխատեսելիորեն: Սովորաբար Ծաղկաձորում դիտվում է արևային եղանակ: Արևային օրերի քանակը տարեկան կազմում է 230-260 օր: Սակայն ձմռանը հաճախակի դիտվում են տեղումներ ձյան տեսքով: Ընդ որում, սովորաբար մինչև 0.5-1մ միանգամից և այնուհետև նորից լինում է արևային օր: Սովորաբար արևոտ օրերի 70%-ը քամի չի լինում, իսկ 30% դիտվում է քամի: Տարածքում գերակշռում են արևմտյան քամիները: Քամու միջին արագությունը հիմնականում տատանվում է 0.1-3.0մ/վրկ սահմաններում:

Շրջանի օդերևութաբանական պարամետրերը ըստ «Հրազդանի օդերևութաբանական կայանի տվյալների բերված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի օդերևութաբանական անվանումը	Քարտուրյունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդանի	1875	-8.3	-6.6	-2.4	4.8	10.2	13.6	17.0	16.8	13.4	7.4	1.4	-5.1	5.2	-31	33

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի օդերևութաբանական անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդանի	79	77	79	70	69	69	67	62	63	67	75	79	71	74	49

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը մմ միջին ամսական / օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, մմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդանի	45	53	67	85	102	69	44	31	34	63	49	46	688	106	120	310
	30	42	40	52	39	42	47	42	49	64	45	34	64			

Աղյուսակ 4. Բնակավայրի տեղակայման բնութագրեր

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Կլիմայական շրջան
1	2	3
Հրազդանի	1875	Ց

Հիդրոտերկրաբանական տեսակետից տարածքի գլխավոր ջրային երակն է հանդիսանում Տանձաղբյուր գետը: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Տանձաղբյուր գետի հովտի աջ թևում՝ թեք դեյուվիալ լանջի վրա:

Տեղամասում գրունտային ջրերն ունեն ընդհանուր տարածում, որոնք սնուցվում են մթնոլորտային տեղումների, ձնհալի հաշվին: Փորված հորատանցքերով հատվել է գրունտային ջրերի երկու հորիզոն՝ առաջին հորիզոնը 2,4-6,0 մետր խորություններում, իսկ երկրորդ հորիզոնը 10,6-13,2 մետր խորություններում (կախված ռելիեֆի նիշերից):

Տեղամասում կապված ձնհալի և մթնոլորտային տեղումների հետ, դիտվում են նաև մերձակերևութային ստոր-ետնյա ջրերի առատություն՝ ենթաբուսահողային ջրերի տեսքով, որոնք ուսումնասիրվող տեղամաս թափանցում են հարավային կողմից:

Համաձայն ունեցած ֆոնդային նյութերի տվյալների գրունտային ջրերի առավելագույն բարձրացումը կարելի է ընդունել 0,3-0,5 մետր բարձր ֆիքսված մակարդակից:

Տեկտոնական տեսակետից տարածաշրջանի առավել խոշոր տեկտոնական կառուցվածքը դա Մարմարիկի խորը տեղադրման խզվածքն է, որը դիտվում է Մարմարիկ .ետի ամբողջ երկայնքով: Խզվածքի ուղեգծի երկարությամբ առանձնացվում են վերին կավճի ու պալեո-ենի նստվածքային ապարների խոշոր շերտերը:

Տարածաշրջանի սեյսմիկ ակտիվությունը և այլ վտան-ավոր երկրաբանական երևույթները անմիջական կապ ունեն ուսումնասիրվող տարածքն ընդ-րկող և հարող ակտիվ խզումային .ոտիների-բեկվածքների հետ: Դրանցից ամենամոտը Գառնիի բեկվածքն է, որն ունի 290 կմ ընդհանուր երկարություն և .տնվում է Ծաղկաձորից 12 կմ դեպի հարավ-արևմուտք: Հաջորդը Փամբակ-Սևան-Սյունիքի բեկվածքն է, որը գտնվում է Ծաղկաձորից 20 կմ դեպի հյուսիս-արևելք, ունի շուրջ 490 կմ երկարություն և հանդիսանում է ՀՀ տարածքի ամենախոշոր ակտիվ բեկվածքը: Սյուսը Գեղամայի բեկվածքն է, որն ունի մոտ 50 կմ երկարություն և ձ-վում է Գեղամա հրաբխային բարձրավանդակի ջրբաժանային մասով:

Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են: Դիտվում են միայն ջրողողման երևույթներ՝ մթնոլորտային տեղումներից:

2.2 Տեղամասի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման, լաբորատոր և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում՝ մինչև 15 մետր խորություններում, մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի էյուվիալ-դեյուվիալ նստվածքները, որոնք ծածկված են ժամանակակից կավային գրունտներով:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով (վերնից-ներքև).

- Շերտ – 1 Լիցք՝ կազմված խճի, խճավազի և ավազակավերի խառնուրդից: Գրունտը խոնավ չ: Շերտի հորատված հզորությունը 2,0 մետր է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:
- Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի ժ1Է24բ III կարգ է:
- Շերտ -2 Բուսահող սև և մուգ շագանակագույն, ծառերի ու թփերի արմատներով, մինչև 10-15% խճավազի պարունակությամբ, կավավազային կազմի: Գրունտը թույլ խոնավ է: Շերտն ունի լայն տարածում և մինչև 0,8 մետր հզորություն:
- Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի ժ1Է9բ և II կարգ է:
- Շերտ – 3 Կավեր բաց շագանակագույն, ձիգ պլաստիկ և կիսապինդ թանձրությամբ, խոնավ և թույլ խոնավ վիճակներում, ոչ խիտ կառուցվածքի, կավավազների ու ավազների մինչև 15-20 սմ հզորությամբ ենթաշերտերով: Ունի լայն տարածում: Հորատված առավելագույն հզորությունը 9,5 մետր է: Ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են:
- Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի ժ1Է8բ և II կարգ է:
- Շերտ -4 Խճային, խճավազային գրունտ ավազային և կավավազային լցոնով մինչև 15-20%: Գրունտը ջրհագեցած է: Շերտն ունի լայն տարածում: Հորատված առավելագույն հզորությունը 5,5 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ են:
- Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի ժ1Է13 IV կարգ է:

2.3 Կենսաբազմազանությունը

Քաղաքին հարակից են Հրազդանի անտառոնտեսության Ծաղկածորի անտառապետության անտառային էկոհամակարգերը՝ չափավոր չորային կաղնուտաբոխուտային լայնատերև խառը անտառներով ու հետանտառային նոսրաանտառներով, որտեղ գերակշռող ծառատեսակը Կաղնի խոշորառեջն է (*Quercus macranthera*): Քաղաքի շրջակա անտառներում աճում են նաև բոխի, հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենու (*Pyrus sp.*, *P. georgica*, *P.communis*) և խնձորենու (*Malus silvestres*) զգալի գերակշռությամբ անտառային որոշ հատվածներ:

Բուն քաղաքն իրենից ներկայացնում է հետանտառային տափաստանացված լանդշաֆտ, որի անմշակ տարածքները ներկայացնում են տարախոտահացազգային, նեղատերև

փետրախոտով, ցորնուկներով, թիթեռնաձողկավորների տարախոտով, հացազգիներով և բոշխերով պատված բուսական համակեցություններով:

2.3.1 Բուսական աշխարհ

Ծաղկաձորի գետավազանի բուսական ծածկույթն ունի որոշակի բարձրունքագոտիական տարբերակում: Այստեղ կարելի է հանդիպել տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերը, դրանց բազմաթիվ ենթատիպերն ու անտրոպոգեն տարբերակները:

Ներկայացվող տարածքը գտնվում է Ծաղկաձորի գետավազանի 1740-1800մ բարձրությունների սահմաններում՝ միջին լեռնային գոտու չափավոր խոնավ, տափաստանացված անտառմարգագետնային գոտում:

Ծաղկաձորի գետավազանը իրենից ներկայացնում է որոշակիորեն փակ ավազան և քանի որ, այստեղ առկա են հանքային ջրերի ռեսուրսներ, այս հատվածի անտառները համեմատաբար խոնավ են և ավելի պահպանված՝ քան գետավազանի այլ տարածքներում:

Ծաղկաձոր քաղաքի բուսականությունը իրենից ներկայացնում է հացազգիների գերակշռությամբ լեռնատափաստանային տարախոտեր /Ոգնախոտ Վորոնովի (*Dactylis Woronovii*), Սեզ տափաստանային (*Phleum phleoides*), Դաշտավուկ սոխուկավոր (*Poa bulbosa*) Կելերիա սանրաձև (*Koeleria cristata*) Յորնուկ ցցամազ (*Bromus squarrosus*), Շյուդախոտ ակոսավոր (*Festuca sulcata*) և այլն/, մասամբ մերձալպյան բարձրախոտերի /իշառվույտ նեապոլիտական (*Melilotus neapolitanus*), Եղինջ երկտուն (*Urtica dioica*), Ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն/ մասնակցությամբ: Հողաբուսաշերտի հաստությունը 20-30 սմ է: Նշված տափաստանացված տարածքում առանձնանում են սոճու (*Pinus hamata*), վայրի տանձենու (*Pyrus communis*) և խնձորենու (*Malus silvestres*), կաղնու (*Quercus macranthera*) տարբեր հասակի ծառեր և, տեղ-տեղ նաև մասրենու (*Rosa*) ու ալոճենու (*Crataegus*) թփեր:

Բույսերի վեգետացիան սկսում է մայիսի սկզբներին: Այստեղ միամյա բույսեր շատ քիչ են հանդիպում, հիմնականում բազմամյա բույսեր են և առանձնանում են շատ արագ վեգետացիոն ժամանակահատվածով՝ հասցնելով ծաղկել ու պտուղ տալ շատ կարճ ժամկետներում: Մայիսի առաջին տասնօրյակին, տերևների և ցողունների կանաչ ֆոնի վրա առանձնանում են Պապլոր հայկականը (*Muscari armeniacum*) և Գնարբուկ գարնանայինը (*Primula veris*): Սոխուկավոր բույսերից հետո այս գոտին պատվում է *Ranunculus-Շ*, *Myosotis-Շ*, *Veronica-Շ* ծաղիկների խայտաբղետ գույներով:

Ամռան կեսին ծաղկում են դաշտավուկները, բոշխերը, ինչպես նաև *Gentiana*, *Campanula*, *Carum*, *Taraxacum* և այլ թիթեռնաձողկավորներ, բարդաձողկավորներ և խաչաձողկավորներ:

Ծաղկաձոր քաղաքի բնակավայրի տարածքում տեղ-տեղ աչքի են ընկնում խիստ նոսր դասավորվածությամբ միայնակ, կամ խմբերով, կամ մացառուտների վերածված խոշորառեջ կաղնու (*Quercus macranthera*) ծառերը, որոնք մեծամասամբ հատված են և բնաշվային աճի

շնորհիվ վերականգնված: Առկա են նաև կորաբուն կեչի Լիտվինովի (*Betula litvinovii*) վեցաբուն մեկ ծառ և տեղ-տեղ աճող մասրենու (*Rosa canina*) ու սովորական կամ մահացու դափնյակի (*Daphne mezereum*) թփեր:

Մարզի տարածքում հանդիպող և անհետացման եզրին գտնվող բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքից: ՀՀ Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Տարածքին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակում:

Թ/ Ն	ՎՃԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆՆԵՐԻ ԿՐՈՒՄԻՆԵՐԻ ԿՐՈՒՄԻՆԵՐԻ		Պահպանության կարգավիճակ
Լատիներեն		Հայերեն	
1	<i>Opopanax persicus</i>	Ճավշիր պարսկական	CR
2	<i>Sedum stoloniferum</i> Gmel.	Թանթանիկ ընձյուղակիր	VU
3	<i>Ophioglossum vulgatum</i> L.	Իժալեզու սովորական	CR
4	<i>Najas minor</i> L.	Ջրահարս փոքր	VU
5	<i>Puccinellia grossheimiana</i>	Անողնուցուկ Գրոսհեյմի	EN
FUNGI – ՄՆԿԵՐ			
1	<i>Amanita muscaria</i> (L.) Pers	Ճանճասպան կարմիր	VU
2	<i>Boletus edulis</i> Bull	Մալիտակ սունկ, թնջուկ	VU
3	<i>Mutinus caninus</i>	Մուտինուս շնային	EN
4	<i>Ithyphallus ravenelii</i>	Մուտինուս Ռավենելի	DD
5	<i>Ithyphallus impudicus</i>	Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ	EN
6	<i>Strobilomyces floccopus</i>	Կոնասունկ փաթիլատիկ	VU

2.3.2 Կենդանական աշխարհ

Ծաղկաձոր համայնքի և դրա շրջակայքի համար դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները, քանի որ Գլխավոր հատակագծով նախատեսված աշխատանքները էական ոչ մի ազդեցություն չեն ունենա անողնաշարավոր կենդանիների վրա: Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մինչև 1700 մ ծովիմակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat.

(գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L.(կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն), կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1-անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Թ/ Ն	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր •րքի անվանում		
	Լատիներեն	Հայերեն	ԹԹ	ÊÊĐĐ	‘äØØ
1	<i>Vormela peregusna</i>	Հարավոուսական խայտաքիս	2	2	-
2	<i>Circaetusgo llicus Gmeelin</i>	Եվրոպական օձակեր	1	1	-
3	<i>Lusciniasvecica occidentalis</i>	Իրանական կապտափող	2	-	-
4	<i>Lacerta oarva Boulenger</i>	Փոքրասիական մողես	1	1	-
5	<i>RhinolophusMehelyi</i>	Մեհելիի պայտաքիթ	1	1	-
6	<i>Barbastella leuuucomelas Gretzschmer</i>	Ասիական լայնականջ չղջիկ	2	-	-
7	<i>Capra aegagrus erxleben</i>	Բեզոարյան այծ	2	2	-
8	<i>Mabuya auuuurata Linneaus</i>	Ոսկեգույն մաբուա	1	1	-
9	<i>Elapha hohenakeri strauch</i>	Անդրկովկասյան սահնօձ	1	1	-
10	<i>Telescopus fallax iberus eichwaldi</i>	Կովկասյան կատվաօձ	1	1	-

2.3.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ չեն ներառում:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 180 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

2.3.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

2.4 Օդային ավազան

2.4.1 Ֆոնային աղտոտվածություն

Օաղկաձորի բնակչության քանակը ներկայումս կազմում է 1503 մարդ, հեռանկարում՝ 1650 մարդ: Համաձայն ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999թ. մարտի 30-ի N192 և 2008թ օգոստոսի 21-ի N 953-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1673-Ն որոշման այն բնակավայրերի համար, որոնց բնակչության թիվը 10 հազ. մարդուց պակաս է ֆոնային արժեքները, հաշվարկված են :

Համայնքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ³, վերցված են ՀՀ Բնապահպանության նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջից (ըստ բնակչության քանակի) և բերված են ստորև աղյուսակում:

Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները մգ/մ³

NN ը/դ	Աղտոտող նյութերի կոդը և անվանումը	ՄԹԱ	Ֆոնային կոնցենտրացիաները Օաղկաձոր համայնք	
			մգ/մ ³	Միավոր ՄԹԿ
1	002 Փոշի	0.5	0.2	0.4
2	701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.02	0.04
3	200 Ազոտի օքսիդներ	0.2	0.008	0.04
4	322 Ածխածնի օքսիդ	5.0	0.4	0.08

Ինչպես երևում է աղյուսակից, մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները Ծաղկաձոր համայնքում չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

ՀՀ տարածքում օդի աղտոտվածության մոնիթորինգը իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը /Էկոմոնիթորինգ/:

Ներկա դրությամբ, տարածքի օդային ավազանի աղտոտվածության աստիճանը գնահատվում է բարենպաստ, անտրոպոգեն ազդեցությամբ գերիշխում են հիմնականում թույլ ազդեցության գոտիները: Տարածքի օդային ավազանի աղտոտվածությունը որևէ վտանգ չի հարուցում:

Համայնքի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են ավտոտրանսպորտը և ջեռուցման համակարգերը:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.5 Ջրային ռեսուրսներ

Համայնքի սահմանում գեղատեսիլ կիրճով հոսում է լեռնային Ծառաղբյուր գետակը, որը գետաբերանի մոտ առաջացնում է լայնատարած գետահովիտ և թափվում Մարմարիկ գետը:

Տեղանքը շոայլորեն հարուստ է քաղցրահամ ջրերի բազմաքանակ ելքերով, որոնց թիվն անցնում է 20-ից:

Տարածքը հարուստ է ստորգետնյա ջրերով: Տարածքի գնահատականը տրված է “Рекомендации по охране окружающей среды в районной планировке” ձեռնարկի հիման վրա: Ստորգետնյա ջրերը կապված են նեոգեն-չորրորդականի հասակի չստորաբաժանված համախմբերի առաջացումների՝ հրաբխային լավաների հետ, պատկանում են ճեղքային, լավատակի և միջլավային տարատեսակներին: Ըստ նախկին տարիներին կատարված հիդրոերկրաբանական հետազոտությունների տվյալների գրունտային ջրերը տարածքում տեղադրված են 150մ-ից խորը հորիզոններում :

Համայնքի ոռոգման ցանցը ունի վերանորոգման կարիք:

2.6 Թափոնների կառավարում

Ծաղկաձորի համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 1200-1300 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1300մ³

շինարարական աղբը: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հանգստի տնակների շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

2.7 Պատմության և մշակույթի հուշարձաններ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից[1]: Ցանկում ներառված է ընդամենը 85 հուշարձան (16 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Կեչառեցու փող. 51	—	6.5/1	S	
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Չարենցի փող. 34	—	6.5/2	S	
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Չարենցի փող. 62	—	6.5/3	S	
Թանգարան Օրբելի եղբայրների		քաղաքի կենտրոնում	—	6.5/4	Հ	
Հուշարձան Լևոն, Հովսեփ և Ռուբեն Օրբելի եղբայրներին	1997 թ.		—	6.5/4.1	S	քանդ.՝ Ա. Հովսեփյան ճարտ.՝ Ռ. Ջուլիակյան
Խաչքար	11 դ.	քաղաքի մեջ, Մ. Մաշտոցի անվան ճամբարի մոտ	—	6.5/5	Հ	
Խաչքար	11 դ.	քաղաքի մեջ, «Նարեկ» հանգստյան տան մոտ	—	6.5/6	Հ	
Խաչքար	12 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում	—	6.5/7	Հ	
Խաչքար	12 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում	—	6.5/8	Հ	
Խաչքար	12-13 դդ.	քաղաքի ամ եզրին, «Եղննիների	—	6.5/9	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
		բացատ»-ում				
Խաչքար	12-13 դդ.	Գրողների միության հանգստյան տան տարածքում	—	6.5/10	Հ	
Խաչքար	12-13 դդ.	քաղաքի մեջ, Մ. Մաշտոցի անվան ճամբարի մոտ	—	6.5/11	Հ	
Խաչքար	12-13 դդ.	«Արցախ» հանգստյան տան մոտ	—	6.5/12	Հ	
Խաչքար Ապուտահլի	1255 թ.	«Մոր և մանկան» հանգստյան տան բակում	—	6.5/13	Հ	
Խաչքար	13 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում	—	6.5/14	Հ	
Վանական Համալիր Կեչառիս	11-13 դդ.	քաղաքի հս-ամ մասում	40.532358° հս. . . 44.719644° ավ. ե.	6.5/15	Հ	
Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	1003 թ.		—	6.5/15.1	Հ	կառուցել է Գր. Մագիստրոս Պահլավունին
Եկեղեցի Սբ. Նշան	11 դ.	Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցուց հվ	—	6.5/15.2	Հ	
Եկեղեցի Սբ. Կաթողիկե	1203-1214 թթ.		—	6.5/15.3	Հ	
Գավիթ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու	12 դ. վերջ	կից է եկեղեցուն ամ-ից	—	6.5/15.4	Հ	
Խաչքար	12 դ.		—	6.5/15.4.1	Հ	
Խաչքար	1214 թ.		—	6.5/15.4.2	Հ	արձանագիր
Եկեղեցի	5 դ.		—	6.5/15.5	Հ	
Մատուռ	13 դ.		—	6.5/15.6	Հ	
Մատուռ	13 դ.		—	6.5/15.7	Հ	
Գերեզմանոց	11-17 դդ.	համալիրի	—	6.5/15.8	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
		տարածքում				
Խաչքար	11 դ.		—	6.5/15.8.1	Հ	
Խաչքար	11 դ.		—	6.5/15.8.2	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	6.5/15.8.3	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	6.5/15.8.4	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	6.5/15.8.5	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	6.5/15.8.6	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	6.5/15.8.7	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	6.5/15.8.8	Հ	
Խաչքար	12 դ.		—	6.5/15.8.9	Հ	
Խաչքար	12 դ.		—	6.5/15.8.10	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.11	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.12	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.13	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.14	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.15	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.16	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.17	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.18	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.19	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.20	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.21	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.22	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/15.8.23	Հ	
Խաչքար Աղալարի	1252 թ.	Վեցիկ ճարտարապետի խաչքարի մոտ	—	6.5/15.8.24	Հ	արձանագիր
Խաչքար Գրիգոր Եպիսկոպոսի և Սահակի	1574 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առև կողմում	—	6.5/15.8.25	Հ	արձանագիր
Խաչքար Դեղկրոնա	1220 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առև կողմում	—	6.5/15.8.26	Հ	արձանագիր
Խաչքար Յոհաննեսի	1251 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առև կողմում	—	6.5/15.8.27	Հ	արձանագիր
Խաչքար	1251 թ.	համալիրի	—	6.5/15.8.28		պահպանվել է

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Յովհաննես քահանայի		ցանկապատի հվ պատի մոտ				արձանագիր պատվանդանը
Խաչքար Սարգսի	13 դ.	Սբ. Նշան և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների միջև	—	6.5/15.8.29	Հ	արձանագիր
Խաչքար Վահրամի	1248 թ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	6.5/15.8.30	Հ	արձանագիր, հատված
Խաչքար Վեցիկ ճարտարապետի	13 դ.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աե կողմում	—	6.5/15.8.31	Հ	արձանագիր
Խաչքար	13-14 դդ.		—	6.5/15.8.32	Հ	
Խաչքար	13-14 դդ.		—	6.5/15.8.33	Հ	
Խաչքար	13-14 դդ.		—	6.5/15.8.34	Հ	
Խաչքար	15-16 դդ.		—	6.5/15.8.35	Հ	
Խաչքար	15-16 դդ.		—	6.5/15.8.36	Հ	
Խաչքար	16-17 դդ.		—	6.5/15.8.37	Հ	
Կոթող	6-7 դդ.		—	6.5/15.8.38	Հ	
Տապանաքար Աբրահամ քահանայի	1273 թ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.39	Հ	արձանագիր
Տապանաքար Գրիգոր Սարկավազի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.40	Հ	արձանագիր
Տապանաքար Ելբեբի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.41	Հ	արձանագիր
Տապանաքար Լաշքաբեի	1221 թ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.42	Հ	արձանագիր
Տապանաքար Մարիամի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.43	Հ	արձանագիր
Տապանաքար Միմեոն վարդապետի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.44	Հ	արձանագիր
Տապանաքար Վասակի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.45	Հ	արձանագիր
Տապանաքար Վարդան Քահանայի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.46	Հ	արձանագիր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Տապանաքար Մեղրակ Քահանայի	1355 թ.	Եկեղեցու մուտքի առջև	—	6.5/15.8.47	Հ	արձանագիր
Եկեղեցական համալիր Սբ. Հարություն	1220 թ.	Կեչառիս վանական համալիրից 120 մ ամ	—	6.5/16	Հ	
Գավիթ	13 դ.	Կից է եկեղեցուն ամ-ից	—	6.5/16.1	Հ	
Գերեզմանոց	12-16 դդ.	Եկեղեցու շուրջը	—	6.5/16.2	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/16.2.1	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/16.2.2	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/16.2.3	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/16.2.4	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/16.2.5	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	6.5/16.2.6	Հ	
Խաչքար	13-14 դդ.		—	6.5/16.2.7	Հ	
Խաչքար	15-16 դդ.		—	6.5/16.2.8	Հ	
Տապանաքար Գրիգորի, Սարգսի	16-17 դդ.		—	6.5/16.2.9	Հ	

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել շին. հրապարակի և մոտեցնող ճանապարհների ջրցան,
- նախատեսել պաշտպանիչ ցանց
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պաշտած տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի

արտահոսք, ապա պետք է փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

3.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

3.3.6 Թափոնների կառավարում

Համալիրի վերակառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր, կամ կրկնակի օգտագործվեն:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Հանգստի տնակների կառուցման ընթացքում աառաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3.3.7 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգելն կանաչապատել:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի ավտոցիստերնով: Կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

4. ԱՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Հանգստի տնակների շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		<p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տարածքի բարեկարգում/ կանա չապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>-ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>

<p>Թափոնների կառավարում</p> <p>▪</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;
--------------------------------------	---	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Բներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Բներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում Արտաքին գնում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու, Կապալառու,

ՕԳՏԱԳՈՂԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արևանէտումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
13. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
14. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
15. 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն
16. 29.01.2010թ. «ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72–Ն որոշումն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք

(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՑԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 14 « 05 » հունիսի 2020 թ.

Օրյեկտ Հանգստի տնակներ (նոր կառուցվող)

(օրյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Չորս տեսակի հանգստի տնակների կառուցում, որից 44-ը երկհարկանի իսկ 8-ը եռահարկ ձեղնահարկով (հակիրճ բնորոշումը, հզորությունը)

4-րդ ռիսկայնության աստիճանի, աշխատանքային նախագծային փաստաթղթերի մշակման համար: ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ, Ծաղկաձոր, Սարալանջի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեներում, 07-005-0023-0292

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող <<Լեգալ>> ՍՊԸ, ք. Երևան, Գրիբոյեդովի փող. 5 աշենք, բն. 17, +374 93 007788

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը իրավունքի պետ. գրանցման վկայական, հայտ, էսքիզ

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը 24 ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՍՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է Հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 2, 511898 հա (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը թեք ռելիեֆ, 116.05, 115.97, 116.11, 116.14, 116.2 քառ.մ մակերեսներով տնակներ և 110 քառ.մ. մակերեսով պարիսպ (ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Համայնքային նշանակության ճանապարհ (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) հողամասին կից առկա են ինժեներական ցանցեր

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր _____ առկա է երեք կողմից հարևան հողատարածքներ _____
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) _____
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ _____
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ _____ քաղաքաշինության նախարարի 30.01.2014թ 263-Ն հրամանով կարգավորվող նորմատիվային պահանջներին և ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսնակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» համապատասխան _____
(եկներվ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) _____ ըստ ներկայացված սխեմայի _____

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) _____ համաձայն նորմերի _____

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) _____ մինչև 11 մ գրոյական նիշից _____

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) _____ 0,4 _____

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) _____ մինչև 30% _____

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) _____ 40 % և ավելի _____

9.7. այլ պահանջներ _____ Ապահովել ՀՀՇՆ30-2014«Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները

10. շինությունների քանդման պայմանները և աշխատանքների հերթականությունը _____

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին

հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է _ համաձայն տեխնիկական պայմանների _ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է _ համաձայն տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է _ համաձայն տեխնիկական պայմանների _ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է _____ (համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

_____ Կազմակերպել տարածքի ջրահեռացում _____ (ոեյլեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

_____ Տարածքը բարեկարգել, կանաչապատել _____ (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

_____ համաձայն նորմերի _____ (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

_____ (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

_____ համաձայն նորմերի _____ (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական նորմերով սահմանված պարտադիր պահանջները, ձեռնարկել միջոցառումներ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-11.07.01-206 (ՄՄՆ 3.02-05-2003) շինարարական նորմերով սահմանված դրույթների իրագործման

19. Շրջակա միջավայրի պահպանում

_____ համաձայն նորմերի _____ (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Մշակել շին.աշխատանքների կազմակերպման նախագիծ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

24 ամիս
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015 N596-Ն որոշման (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

անցկացնել <<ՇՄԱԳ>> հանրային քննարկում (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

ներկայացնել գեոլոգիական եզրակացություն (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

տնակների հաշվարկով, հողամասի սահմաններում ապահովել 100% ավտոկայանատեղի յուրաքանչյուր տնակին առնվազն մեկ ավտոկայանատեղի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ԾԱՂԿԱԶՈՐ _____ ՀԱՄԱՅՆՔԻ



Handwritten signature

ՂԵՎԱԿԱՐ _____ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱԿՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ



REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR


2310 ք. Ծաղկաձոր Օրբելի երթ. 10 Tsakhkadzor city Orbelli Br.10
Հեռ.Տել.: (+374 223) 6-04-02, 6-04-03

03 հունիսի 2020 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԿ ԿԱՐԾԻՔ
Ծաղկաձորի համայնքապետարանում 27.05.2020թ անցկացված
հանրային քննարկման վերաբերյալ

Ծաղկաձոր համայնքի Սարալանջի 1-ին փող. թիվ 1/2 հասցեներում <<Լեզալ>> ՄՊԸ-ի կողմից կառուցվող հանգստի տնակների (քոթեջային թաղամասի) վերաբերյալ 2020 թվականի մայիսի 27-ին Ծաղկաձորի համայնքապետարանում կայացած հանրային քննարկման արդյունքում արձանագրվեցին մի շարք կարևոր հանգամանքներ՝ կապված տարածքի բարեկարգման, առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու կառուցապատման կազմակերպման, ջրահեռացման և կանաչապատման վերաբերյալ: Քանի որ գոյություն ունեցող բնական միջավայրը կանաչապատ և ծառապատ չէ՝ առաջադրանք տրվեց կառուցապատման ավարտից հետո կատարել կանաչապատման աշխատանքներ :

Անցկացված հանրային քննարկումը և կառուցապատողի կողմից ներկայացված ծրագիրը գնահատում են բավարար, առաջարկում են հաջորդ քննարկմանը ներգրավել նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի համապատասխան մասնագետներին և համայնքի բնակիչներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


3 400335



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 13 փետրվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԼԵԳԱԼ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ք. Սարալանջի 1-ին փողոց 1/2

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Տարածամկետ վճարելու պայմանով անշարժ գույքի առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագիր, 16/12/2019թ. ս/մ 15504, Համայնքի ղեկավարի 03/02/2020թ. թիվ 66 որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-005-0023-0292

Մակերեսի չափը (հա)՝ 2.511898

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հանգստի համար նախատեսված Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 13022020-07-0129, գաղտնաբառ՝ 9SXZAHBKQABD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ


- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-005-0023-0292-001	Տնակ	116.05 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	07-005-0023-0292-002	Տնակ	115.97 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	07-005-0023-0292-003	Տնակ	116.11 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	07-005-0023-0292-004	Տնակ	116.14 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	07-005-0023-0292-005	Տնակ	116.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	07-005-0023-0292-006	պարիսպ	110 քմ, 255.96 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գարիկ Տիգրանյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր



ՎԿԱՅԱԿԱՆ N 13022020-07-0129, գաղտնաբառ՝ 9SXZAHBKQABD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-codastre.am կայքէջի միջոցով





Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
2020թ.



Տեխնիկական պայման ԱՄ 1493 /2020/ (Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման նախագծման)

մ. Կոտայք, ք. Ծաղկաձոր Մարալանջի 1-ին փողոց 1
/Տարածքի հասցե/

«ԼԵԳԱ» ՍՊԸ
/Բաժանորդի անուն, ազգանուն/

098130003
/Հեռախոսահամար/



218686

